

**ՀՆԱԳՈՒՅՆ ՇԵՐՏԻ ԲԱՌԵՐԸ ՍՅՈՒՆԻՔ-ԱՐՑԱԽ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ
ԲԱՌԱՊԱՇԱՐՈՒՄ**

**(«Հագուստ, անձնական զարդարանք և խնամք» բառիմաստային խմբի
համեմատական քննություն)**

Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարի՝ հնդեվրոպական առնչակցություն ունեցող բառաշերտը դեռևս համակողմանի ուսումնասիրության պահանջ ունի: Այս բնագավառում անուրանալի ավանդ ունեն Ն. Աճառյանը, Գ. Ջահուկյանը, Լ. Հովաննիսյանը¹ և ուրիշներ, որ փորձել են բացահայտել բարբառային բառապաշարի հնագույն շերտը, դրա առնչակցությունը գրաբարի հետ:

Այս և նման հարցերի ուսումնասիրությունը չի կարող ավարտված համարվել, և բարբառային տվյալների շարունակական հայտնաբերմամբ, դրանց քննությամբ ու զուգորդությամբ կարող են հարստանալ ոչ միայն հայերենի պատմական բառագիտությունը, այլև համեմատական լեզվաբանության մի շարք բնագավառներ:

Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարի «հագուստ, անձնական զարդարանք և խնամք» բառիմաստային խմբում ընդգրկված հնդեվրոպական ծագմամբ բառերի գրեթե կեսը վկայվում է հայերենի տարբերակներում: Կ.Դ. Բաքի նույնանուն ցուցակում² ընդգրկված թվային նշաններով անուններից հայերենին հայտնի ձևերը լավագույնս քննվել են Գ. Ջահուկյանի կողմից (գլխավոր և ավելի մանր բաժանումներով, միննույն թվահամարի տակ տրվող հոմանիշներով հանդերձ)³: Դրանցից որոշների ծագումնաբանական հարցերը մնում են առկախ՝ **ոստայն, կտաւ, թաղի-ք**, բարբառային՝ **սերեկ, յեռում** և այլն: Ավելացված հինգ բառերից, որ չեն վկայվում Կ. Բաքի ցուցակում՝ **ցկտել, մալանչ, յեռում || յերիմ, ծիկ, գինդ**, Սյունիք-Արցախ բարբառախմբում վկայվում են **ցկտել, մալանչ, կծիկ** բառերը: Այսուհանդերձ, կարծում ենք, որ բարբառային հնագույն շերտին առնչվող

¹ **Հովաննիսյան Լ. Շ.**, *Ղարաբաղի բարբառի բառապաշարի հնագույն շերտերը*, Լրաբեր հասարակական գիտությունների, N 1, 2000, էջ 117-122:

² **Buck C. D.**, *A Dictionary of selected synonyms in the principal Indo-European languages*, The university of Chicago press, Chicago & London, 1988, p. 392 (392-454).

³ **Ջահուկյան Գ. Բ.**, *Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1987, էջ 211 (այսուհետև՝ Ջահուկյան ՀԼՊ):

բառային տարբեր միավորներ առանձնակի քննություն են պահանջում:

1. Բառեր, որ բացակայում են Կ. Բաքի և Գ. Ջահուկյանի ցուցակներում:

«Հագուստ, անձնական զարդարանք և խնամք» թեմատիկ խմբում թերևս կարելի է ընդգրկել բարբառախմբի **կուղ** > **կըղ-ան**⁴ բառը, որ հանդիպում է գրաբարում **կուղ**՝ ***gu-lo-** || ***geu-** «ծռել, կամար կազմել» արմատից⁵: Գրաբարում վկայվում է «ծալ, կրկնված կամ ոլորք մասանց զիրերօք, հիւսք, մանուած» իմաստներով⁶, իսկ հայերենի բարբառներում առկա բազմաթիվ իմաստներից՝ «1. ոլորված և հյուսված իրի ամեն մի թելը, հյուսք, 2. տրեխի եզրերին քաշված փոկի երիզը, 3. սամիի փոկ, 4. կարթին անցկացրած մազե լար, 5. ուրիշ նյութի մեջ խառնված նյութ» և այլն Սյունիք-Արցախում գործածվում է **կըղան-ը**՝ «1. փափուկ կաշվից հաստ պարան, 2. հնց. գութանը, սայլը լուծին միացնելու մասը»: Հենց այս արմատից ենք բխեցնում գրաբարի **կակուղ** բառը՝ որպես բարդության տեսակ՝ **կուղ-կուղ** > **կա-կուղ** (> **կըկղել**) «1. փափուկ, 2. ոլորվող, ճկվող, 3. փխր. հաշտ, համերաշխ»: Ս. Գրքում հիմնականում հանդիպում է «1. փափուկ, 2. ճկվող» իմաստներով. «Երբոր նորա ճղերն արդեն **կակուղացել են**» (Մատթեոս 24:32), «...**կակուղ** խօսքեր...» (Յոբ 41:3), «...ձեթիցն աւելի **կակուղ** են...» (Մադմոս 55:21) և այլն: Բարբառախմբում կան բազմաթիվ բարդություններ՝ **կըկըղամես**, **կըկը/ուղիորդես**, **կըկըղլուգոն**, **կըկըղ-կակող** || **կակուղ-կակուղ**, **կըկըղցնել**, **կըկըղօթուն**, **կըկըղօտել** և այլն: Հին հայերենի թեմատիկ խմբում ընդգրկված **դերձակ** բառը դրվում է միջին պրակ. երրորդական ձևից՝ **darzak**⁷: Բարբառախմբում լայն կիրառություն ունի նույնիմաստ պրակ. **դարզի darzi** /دازي/ բառը: Հնչյունական և իմաստային առումով մոտ է բարբառախմբի **արց**՝ «հյուսվածքի սկսելը, սկիզբը» արմատը, սակայն հեղինակները⁸ տարբեր նախաձևեր են դնում՝ ***dherg h-** -**դե/արձ-** և ***arg h** – **արց** || **արց**: Գ. Ջահուկյանը վերապահությամբ (?) է վերականգնում **արց** (<***արձ**)⁹ արմատի

⁴ Հ. Աճառյանը Վանում նշում է նույն բառը՝ «արորի ինչ-որ մաս» իմաստով (**Աճառեան Հ., Հայերեն գաւառական բառարան**, Լազարեան ճեմարան, Թիֆլիս, 1913, էջ 578 (այսուհետև՝ ՀԳԲ):

⁵ **Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան**, «Ասողիկ» հրատ., Երևան, 2010, էջ 426 (այսուհետև՝ ՀՍԲ):

⁶ **Աւետիքեան Գ., Միւրմէլեան Խ., Աւգերեան Ս., Նոր բառգիրք հայկազեան լեզուի**, հատ. I, Տպարան ի Սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1836, էջ 1122:

⁷ **Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան**, Երևանի համալսարանի հրատ., հատ. II, Երևան, 1926, էջ 656 (այսուհետև՝ ՀԱԲ):

⁸ ՀԳԲ 155, **Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն**, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1972, էջ 293 (այսուհետև՝ ՀԲՆ):

⁹ ՀԲՆ, էջ 293:

հնդեվրոպական տարբերակը. հնարավոր է արդյոք ձևիմաստային մթագնում կրած լինի: Այսուհանդերձ, ենթադրում ենք՝ այս բառիմաստային խմբին պետք է ավելանա միայն Սյունիք-Արցախում հանդիպող **արց** > **արցիլ** արմատը, եթե ընդունում ենք Հ. Աճառյանի զուգահեռած հուն. տարբերակը՝ **ἀρχέω** «սկսել»¹⁰, հմմտ.՝ **ἀρχω**, բայական ձևը՝ **ἀρξαι** «լինել առաջինը, սկսել» և այլն¹¹:

2. Կասկածելի ստուգաբանությանը բառերի քննություն

Գ. Ջահուկյանի կազմած ցուցակում հարցականով են դրվում 9 բառ, բայց այստեղ կքննենք այնպիսի միավորներ, որ հնարավոր տարբերակներ կարող են ունենալ բարբառային բառապաշարում:

Թաղիք բառի փոխարեն բարբառախմբում առավելապես տարածված է **քէչա**, որի ծագումը վերագրում են թյուրքերենին¹². հմմտ.՝ **կաճ** || **կայճ** «1. թաղիք, 2. նուրբ» և թյուրք. **keçe** «թաղիք»: Բառի գրավոր վկայությունը հայերենում ավելի հին է. «...քանզի հարեայ նիզակաւ՝ ճախր առնոյր **կաճեայն**»¹³, «Եւ զօրագլուխն ոմն անարի հսկայ ի տիգաւորացն վառեալ թաղեաւ **կաճեայ**՝ շահատակեր ի մէջ պատերազմին առ Օշական առապարան»¹⁴, մինչդեռ Ս. Նիշանյանը, հավանաբար հիմք ընդունելով բառի՝ 11-րդ դարում հին թյուրք. վկայությունը, **keçe**-ն ընդգրկում է թյուրքերենից հայերենին անցած փոխառությունների շարքում¹⁵: Թե՛ Աճառյանը, թե՛ Գ. Ջահուկյանը այն համարում են չստուգաբանված¹⁶: Սյունիք-Արցախի բարբառախմբում առկա **կէճ** || **կէճ** բառի իմաստային տարբերակները՝ «1. թաց, 2. ճկուն, 3. փափուկ, 4. դալար, 5. փոխ. փափկասեր, վավաշոտ» հուշում են, որ այն հին հայերենի **գէջ** || **գէճ** արմատի բարբառային տարբերակն է՝ **գ** > **կ/կյ** և **ջ/ճ** > **ճ** փոփոխություններով՝ «...հատիկը չօր, կյւրին **կէճ**», «**կէճ** փաղ, տախտակ», «կաշին **կէճացալ** ա» և այլն, որի նախաձևն է՝ ***g^woidh-**, հմմտ.՝ սլով. **židěk** «1. հեղուկ, 2. ջրալի, 3. ճկուն, դյուրաթեք», ռուս.

¹⁰ ՀԳԲ, էջ 155:

¹¹ Այս մասին տե՛ս՝ **Frisk H.**, *Griechisches etymologisches Wörterbuch*, band I, Carl Winter - Universitätsverlag, Heidelberg, 1960, p. 159.

¹² **Սարգսյան Ա. Յու.**, *Ղարաբաղի բարբառի բառարան*, Արցախի պետական համալսարան, Երևան, 2013, էջ 810 (այսուհետև՝ ՂԲԲ):

¹³ **Խորենացի Մ.**, *Պատմութիւն հայոց* (աշխատասիրութեամբ Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի), Արագատիպ Մնացական Մարտիրոսեանցի, Տփղիս, 1913, էջ 266:

¹⁴ **Կաղանկատուացի Մ.**, *Պատմութիւն Աղուանից Աշխարհի*, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1983, էջ 37:

¹⁵ <https://www.nisanyansozluk.com/?k=ke%C3%A7e&lnk=1>:

¹⁶ ՀՄԲ, էջ 377, ՀՄԲ II, էջ 497:

жидк/ий «1. ջրալի, 2. ճկուն» և այլն¹⁷: Ավելի հավանական է, որ թյուրք. **keçe** բառը փոխառվել է Սյունիք-Արցախի բարբառախմբում ձևավորված տարբերակից¹⁸: **Կեճ** բառը այս խմբում չենք ընդգրկում:

Գալով **թաղիք** բառին՝ կարծում ենք, որ **թառլիզ** || **թառլիք** «ձիու վրա՝ թամբի տակ զցվող թաղիքե ծածկոց» իմաստով բառի հիմքում հենց **թաղիք** արմատն է: Բարբառախմբից **թաղիք** բառը անցել է արևելյան թյուրքերենի խոսվածքներին, ապա թյուրքական ձևով փոխանցվել բարբառախմբին՝ պահպանելով իմաստը՝ «թաղիք». հմմտ.՝ **tərlik** «1. թամբի տակից դրված թաղիք, 2. նախկինում տարեց տղամարդկանց գլխարկի տակից դրվող կտոր, 3. կոշիկների ներսից դրվող գործվածք»¹⁹: Ընդ որում՝ **թաղիք** բառի վերջադիր **ի-ք (իք)**-ի համաբանությամբ գործածվել և թյուրքմբում է թյուրք. **-lik** ածանց՝ **tər-lik (-իք > -lik)**, որովհետև ծագմամբ թյուրքերենում գործածվող **tər** «քրտինք, թորած գոլ հեղուկ» արմատը, կարծում ենք, առնչություն չունի բառի նշանակության հետ, որ բխեցնում են՝ **ter > terlik** «քրտնող, թաղիք»²⁰:

Սարել բառը լայն տարածում ունի հայերենի բարբառների մեծ մասում (Ար. Թբ. Շվ. Տգր.)՝ «1. սարքել, լարել, 2. նետել, զցել, 3. դուրս ցայտել, 4. մանել, 5. նետել հեռու զցել, 6. մեկնել, երկարել»²¹ իմաստներով: Սյունիք-Արցախում բառը նույնպես բազմիմաստ է՝ «1. լարել, 3. պատրաստ պահել, 3. նախապատրաստել որևէ գործ»: Հ.-ե. Ժառանգորդ մյուս լեզուներում արմատը բազմաթիվ իմաստներ է ձեռք բերել, հմմտ., օր.՝ անգլ.՝ **spin-to spin** «պտուտքում, մանելն, վայրէջք, արագ թափալում: Մանել, հիսել, ոլորել, դարձնել, պտուտքել, գործել, զոգաւորել, երկնցնել, վատնել: Պտուտքիլ, ոլորել, յարդարել, ցայտիլ»²² և այլն: Բարբառախմբում **սարել**-ը մասնավոր իմաստներից բացի ընդհանրական նրբիմաստներով է ծանրաբեռնված և կարող է գործածվել տարբեր բնագավառներում, այդ թվում՝ «ինչ-որ իր սարքել, նախապատրաստել մի բանի համար», օր.՝ «Քանդիիրը **սարսիլ էմ**, վեր քիցեմ վիզը», «Սաղ կօրծիքնին **սարսիլ-պաղրաստ ա**, կարանք սրքրսենք» և այլն: Նշված իմաստներով գործածությունը, կարծում ենք, կարող է հիմքեր ստեղծել հ.-ե. ***k'ar-** արմատի մի տարբերակը համարելու համար՝ «մանել»,

¹⁷ Այս մասին տե՛ս՝ ՀԱԲ I, էջ 550-551:

¹⁸ Քիչ հավանական է նաև սանսկրիտից թյուրքերենին անցած լինելը (այս մասին տե՛ս՝ **Eyuboğlu İ. Z.**, *Türk dilinin etimoloji sözlüğü*, ikinci besin, Sosyal yaymlar, İstanbul, 1988, s. 393.

¹⁹ Այս մասին տե՛ս՝ *Azərbaycanca dilinin izahlı lügət*, cild 4, «Şər-q-qr»», Baqı, 2006, s. 324.

²⁰ <https://www.nisanyansozluk.com/?k=terlik&lnk=1>:

²¹ *Հայոց լեզվի բարբառային բառարան*, Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2001-2012, էջ 258:

²² **Գույումճեան Մ. Կ.**, *Ընդարձակ բառարան անգլիերէնէ հայերէն*, Կ. Տօնիկեան եւ Եղբայրք, Պէյրութ, 1981, էջ 1104:

այլն՝ «կապ, հյուսվածքի թել, հյուսել, կապել»²³: Այս ամենով հանդերձ, սակայն, առանձին «մանել» իմաստով չի հանդիպում:

Ստուգաբանական տեսանկյունից լիարժեք տվյալներ չունի Գ. Ջահուկյանի կողմից այս խումբ բերված **ցկտել** «(հագուստը) մաշել, պատառոտել» բառը, որ հայերենի բարբառներից նշվում է Եվդ. Սբ.՝ **ցկտել** «անընդհատ օգտագործելուց մաշվել»: Հայերենի մի շարք բարբառներում **ցկա** || **ցկփ** (Արցախում՝ **ցըլփ** || **ցըլքփ**²⁴ > **ցըլքփ տալ** «փայտից, քարից, ապակուց և այլ իրերից մանր կտոր պոկվել) «շյուղ, ծեղ» բառի դիմաց Գորիսում կա **ցիլանց** || **ցիլանք**, որ նշանակում է ոչ միայն «փայտի, ապակու, մետաղի ծեղ», այլև «մաշված կտոր, կտորի կտորտանք, կտորի մաշվածությունից մնացած թելերը»: Արցախում և Սյունիքում հանդիպում է նաև **ցըլընք/զցըլընք/զօտել** «իրի կտորտանքները, այլև ջրի շիթերը, պղպջակները թռչկոտել, այսուայնկողմ ընկնել»: Բարբառային բառերի ձևի և իմաստի բաղդատումից կարելի է եզրահանգել, որ վերոնշյալները ծագում են հ.-ե. ***(s)k'el-** «կտրել» արմատից²⁵:

Ոստայն «բանվածք» բառը բարբառախմբում ունի **վեստան** տարբերակը՝ «1. ջուլհակի կամ գորգագործի հաստոց, 2. գործած թելերի ցանցը»: Ցուցակներում չընդգրկված, բայց բարբառախմբում վկայվող **հուռնը** «մետաքսյա փայլուն զգեստ» բառը մնում է չստուգաբանված:

Գրական համարվող որոշ միավորումներ բարբառախմբում վկայված չեն, ինչպես՝ **զեղմ**, փոխարենը՝ **մօրթի** և այլն: **Զ-զեստ** բառը մուտք չի գործել բարբառախումբ, փոխարենը մասնավոր կամ ընդհանրական իմաստով փոխառություններ կան, ինչպես՝ **լրբաթ** || **լրբաս** || **լրպաստ** «հագուստ, հանդերձանք» պրս. **lebas** /ها لباس/ և այլն: Առավել տարածված է **ջօր** բառը, որի հ.-ե. առնչակցությունը անստույգ է:

3. «Հագուստ, անձնական զարդարանք և խնամք» բառիմաստային խմբի համադրական աղյուսակ²⁶

²³ ՀԱԲ IV, 187-188:

²⁴ ՂԲԲ, էջ 748:

²⁵ Հնդեվրոպական զուգահեռները կարելի է տեսնել՝ **Pokorny J., Indogermanisches etymologisches Wörterbuch**, I. bend, München: Francke Verlag, Bern, 1959, p. 923, նուստրասիկ հիմքերը՝ **Համբարձումյան Վ.**, *Հայերենի տվյալների ընդգրկումը նոստրասիկ լեզուների համեմատական բառարանի մեջ և հետագա ուսումնասիրության խնդիրը*, Պատմաբանասիրական հանդես, թիվ 3, 2011, էջ 154:

²⁶ Կ. Բաքի բառիմաստային խմբի հիման վրա կազմած աղյուսակում մզեցված են հայերենում առկա թվային նշանակումներով բառերը, իսկ բացակայող միավորները աղոտ են: Ամբողջ աղյուսակում բառերի կամ բառամիավորումների բացակայությունը դրվում է բացասական նշանով (-), առկայությունը՝ դրական նշանով (+): Գ. Ջահուկյանի ցուցակում ընդգրկված

Սույն ուսումնասիրության շրջանակում կազմել ենք համադրական աղյուսակ, որտեղ նախորդ ուսումնասիրությունների զուգորդությամբ փորձել ենք վերհանել թեմատիկ խմբում ընդգրկվող բառերի տեսակարար կշիռը Սյունիք-Արցախ բարբառային տարածքում: Իհարկե, ներկայացվող ցուցակը կատարյալ չէ ու չի կարող լինել վերջնական: Հնդեվրոպական ծագմամբ կամ առնչակցությամբ բառերի քննությունը բարբառային բառապաշարում՝ ըստ թեմատիկ խմբերի, նոր փորձ է պատմական բառագիտության, բարբառագիտության բնագավառում և կարող է օգտակար լինել պատմահամեմատական բառագիտության որոշ հարցերի լուսաբանման համար:

Ըստ Կ. Բաքի (անգլերեն)	+/-	Ըստ Գ. Չահուկյանի	Սյունիք-Արցախ
6.11. to Clothe, Dress	+	6.11. Ազանիմ < Զ-զենում, գենալ	Հրքցունել Կենալ
-	+	6.111. Յկտել	ցիլանգ
6.12. Clothes, Clothing	+	6.12. Զ-զեստ	-
6.13. Tailor, Seamstress	-	6.13. Դերձակ, դերձակուհի	-
6.21. Cloth	+	6.21. Հեն-ք	Հենքիլ
		Անկուած	-
		Ոստայն	Վէստան
6.22. Wool	+	6.22. Սար	-
		Բուրդ	Պուրթ
		Գեղմ	-
-	+	6.221. Մալանչ	Մալանչ
6.23. Flax, Linen	+	6.23. Կտաւ	Կրտավ
6.24. Cotton	-	6.24. Բամբակ	-
6.25. Silk	-	6.25. Մետաքս	-
6.26. Lace	-	6.26. Ժանյակ	-
6.27. Felt	+	6.27. Թաղիք	Թաղիք
6.28. Fur	-	6.28. Սորթ	-
6.29. Leather	+	6.29.- Կաշի	-
		Սերեկ	-
6.31. to Spin	+	6.31. Սարել	Սարել
6.32. Spindle	+	6.32. Իլ(իկ)	Իլիկ
6.33. to Weave	+	6.33. Գործեմ	Կործել
		Հանում (հենում, հինում)	Հինել
-	+	6.331 Յեռում	-

բառերը գրելիս հիմնականում հավատարիմ ենք մնացել հեղինակի գրելաձևին: Սյունիք-Արցախ մասում նշվում է բարբառային ձևերի մեկական օրինակ արմատական կամ բաղադրյալ ձևերով: Հարցականով (?) նշումներ չկան աղյուսակում. դրանք համարվել են ստուգաբանորեն հ.-ե. առնչակցություն ունեցող բառեր և ընդգրկվել են ցուցակում: Աղյուսակը ավելորդ չձանրաբեռնելու, ավելի մատչելի դարձնելու նպատակով չեն ընդգրկվել հ.-ե. վերականգնվող արմատները: Դրանք ըստ անհրաժեշտության բերված են տեքստում:

		Յիրեն	-
		Ստեծ	-
		Ստորի	-
		Շիւ	-
6.34. Loom	-	6.34. Ջուլիսկ	-
6.35. to Sew	-	6.35. Կարել	-
6.36. Needle	+	6.36. Ասեղ	Ասեղ
6.37. Awl	+	6.37. Հերին	-
6.38. Thread	+	6.38. Թել	Թիլ թէլ
		Առ-էջ	-
-	+	6.381. Կծիկ	Կրծէկ
		Կլ-ոք	-
6.39. to Dye	+	6.39. Տոգորեն	-
6.41. Cloak	+	6.41. Աւթոց	-
6.412. Overcoat	-	6.412. Վերարկու	-
6.42. Woman's Dress	-	6.42. Կանացի զգեստ	-
6.43. Coat	-	6.43. Վերարկու	-
6.44. Shirt	-	6.44. Վերնաշապիկ	-
6.45. Collar	+	6.45 Աւծի-ք	-
6.46. Skirt	-	6.46. Փէշ	-
6.47. Apron	-	6.47. Գոգնոց	-
6.48. Trousers	-	6.48. Տարբատ	-
6.49. Sock, Stocking	-	6.49. Գուլպաներ,	-
6.51. Shoe	+	6.51. Աւղ	-
6.52. Boot	-	6.52. Կոշիկ	-
6.53. Slipper	-	6.53. Հողաթափ	-
6.54. Cobbler, Shoemaker	-	6.54. Կոշկագործ, կոշկակար	-
6.55. Hat, Cap	-	6.55. Գլխարկ, գլխարկ	-
6.57. Belt, Girdle ²⁷	-	6.57 Գոտի	-
6.58. Glove	-	6.58. Ձեռնոց	-
6.59. Veil	+	6.59. Տեռ	-
		Քաղ	Քող
6.61. Pocket	-	6.61. Գրպան	-
6.62. Button	-	6.62. Կոճակ	-
6.63. Pin, Brooch	-	6.63. Քորոց, բրոշ	-
6.71. Adornment (personal)	+	6.71. (Ձ-) արդ	Ջրրթարէլ
-	+	6.711. զինդ	-
6.72. Gem, Jewel	+	6.72. ակն	Ակ
6.73. Finger Ring	+	6.73. Մատանի	Մըտանի
6.74. Armband, Bracelet	-	6.74. Թեկապ, ապարանջան	-
6.75. Necklace	-	6.75. Վզնոց	-
6.81. Handkerchief	-	6.81. Թաշկինակ	-
6.82. Towel	-	6.82. Սրբիչ	-
6.83. Napkin	+	6.83. Անձեռոցիկ	-
6.91. Comb	-	6.91. Սանրել	-

²⁷ Կ. Բաքի մոտ բացակայում է 6.56-ը:

6.92. Brush	-	6.92. Խոզանակ	-
6.93. Razor	+	6.93. Ածելի	Միլի
6.94. Ointment	+	6.94. Աւծ	-
6.95. Soap	-	6.95. Օճառ	-
6.96. Mirror	-	6.96. Հայելի	-

Այսպիսով՝ Կ. Բաքի կողմից ներկայացված «հագուստ, անձնական զարդարանք և խնամք» բառիմաստային խմբի 56 թվային նշանակումով բառերին Գ. Ջահուկյանը ավելացրել է 5-ը՝ 61: Ընդհանուր առմամբ՝ թվային նշանակումով 61 բառից՝ առանց հոմանիշների, հայերենում վկայվում է 29 բառ, որը կազմում է 48 %-ը: Հոմանիշները ներառյալ՝ 42 բառ ունի հնդեվրոպական առնչակցություն:

Սյունիք-Արցախ բառապաշարում թվային նշանակումով 61 բառից առկա է 16-ը՝ առանց հոմանիշների, որ կազմում է 26 %-ը:

Հոմանիշներով հանդերձ՝ 42 բառից բարբառախմբում հնդեվրոպական առնչակցություն ունի 21 բառ, որին էլ ավելացրել ենք 2 բառ, որ չեն ընդգրկվել վերոնշյալ ցուցակներում՝ **արց, կու(ը)ղ-ան**, ընդհանուր՝ 23 բառ՝ **հրքցընէլ, կէնալ, ցիլանգ, հէնքիլ, վէստան, պո՛ւրթ, մալանչ, կըտավ, թաղիք, սա՛րէլ, իլիկ, կօրծէլ, հի՛նէլ, աւէղ, թիլ, կըծէկ, քօղ, զըրթարէլ, ալ, մըտանի, ծիլի, արց, կըղան**, որ կազմում է 55 %-ը:

Kumunts Mher - Words of ancient layer in Syunik-Artsakh dialectical vocabulary (“clothing, personal decoration and care” semantic group’s comparative examination) – Dialectical vocabulary of Syunik-Artsakh is rich with the words with Indo-European connections. Most of the words in the semantic group of “Clothing, personal decoration and care” are found in the dialectical area – **հրքցընէլ (hqcnel), կէնալ (kenal), ցիլանգ(tsilang), հէնքիլ (henqil), վէստան (vestan), պո՛ւրթ (purt), մալանչ(malanch), կըտավ (ktav), թաղիք(taghiq), սա՛րէլ (sarel), իլիկ (ilik), կօրծէլ (kortsel), հի՛նէլ (hinel), աւէղ (asegh), թիլ (til), կըծէկ (ktsek), քօղ (qogh), զըրթարէլ (zrtarel), ալ (ak), մըտանի (mtani), ծիլի (tsili), արց (arts), կըղան (kghan)**, which makes up 55% of the total words in the thematic group. Some of the examined words in the thematic group were passed from the dialectical area to Turkish, such as **կէճ (qetch) > keçe, թաղիք (taghiq) > tərlik > րәиілiк (tarlig)**.

Кумунц Мгер - Древнего пласта слова в сюникско-арцахской диалектной лексике (сравнительное исследование семантической группы «Одежда, предметы личного пользования и уход»)

Лексика сюникско-арцахского диалекта богата словами индоевропейского происхождения.

Большинство слов семантической группы «Одежда, предметы личного пользования и уход» встречается в диалектной лексике: **հրրցընէլ** (хыкцынел), **կէնալ** (кенал), **ցիլանգ** (циланг), **հէնքիլ** (хенкил), **վեստան** (вестан), **պուրթ** (пурт), **մալանչ** (маланч), **կրաւով** (крав), **թաղիք** (тахик), **սաւրէլ** (сарел), **իլիկ** (илик), **կործէլ** (корцел), **хինէլ** (хинел), **шак** (асех), **թիլ** (тил), **կրծէկ** (кцек), **քоқ** (кох), **զыртгарел** (зыртгарел), **ակ** (ак), **մալանի** (мытани), **ծիլի** (цили), **արц** (арц), **կухан** (кухан), которые составляют 55% от общего количества слов в тематической группе. Некоторые из слов, рассмотренных в тематической группе, перешли из диалектной области в турецкий, например: **կէճ** (кеч) > **keçe**, **թաղիք** (тахик) > **tərlik** > **թաղիқ** (тарлиг).